

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2014 թվականի դեկտեմբերի _____

N-----Ն

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԶՈՂԵՐԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏՍԵՆՈՒ ՄԱՍԻՆ**

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 5-րդ հոդվածի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և 2011 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N23 արձանագրային որոշման համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան և սեռական բռնության դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել ընտանեկան և սեռական բռնության գոհերի ուղղորդման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հ. Աբրահամյան
2014 թ. դեկտեմբերի

Երևան

ԿԱՐԳ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԶՈՂԵՐԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, ներառյալ՝ հասարակական կազմակերպությունների համագործակցության հիմնական ուղղությունները՝ ընտանեկան և սեռական բռնությունների կանխարգելման, բացահայտման, այդպիսի բռնության զոհերի սոցիալական վերականգնման, ինչպես նաև նման բռնության սպառնալիքների, այն ծնող պայմանների և պատճառների վերհանման ու վերացման ընթացքում:

2. Ընտանեկան և սեռական բռնության զոհերի ուղղորդման գործում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմիններն են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

3. Սույն կարգի հիմնական նպատակներն են՝

1) բացահայտել ընտանեկան և սեռական բռնության ենթարկված և սոցիալական պաշտպանության և օգնության կարիք ունեցող անձանց,

2) տրամադրել ընտանեկան և սեռական բռնության զոհերին ժամանակավոր կացարան,

3) կազմակերպել օգնության, վերականգնման և աջակցության կարիք ունեցող զոհերի սոցիալական վերահսկողություն,

4) նպաստել զոհերի ինտեգրմանը հասարակությունում և ընտանիքում:

4. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **ընտանեկան բռնություն**՝ ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնության կիրառում կամ տնտեսական միջոցներից զրկում,

2) **Ֆիզիկական բռնություն**՝ ցանկացած բռնի գործողության միջոցով մարմնական ցավ կամ տառապանք պատճառելը, ծեծը կամ խոշտանգումը, դիտավորությամբ մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը կամ կյանքից զրկելը,

3) **հոգեբանական բռնություն**՝

ա. անձի արժանապատվությունը նվաստացնելը և/կամ ստորացնելը, վերջինիս ցանկացած գործողությամբ կամ անգործությամբ դիտավորությամբ հոգեկան տառապանք կամ ցավ պատճառելը կամ հոգեկան հարկադրանքը, այդ թվում՝ սպառնալիքները,

բ. երեխայի կամ անօգնական վիճակում գտնվող այլ անձի ներկայությամբ, ով ֆիզիկական կամ հոգեկան հատկանիշներով զրկված է օգնություն ցուցաբերելու հնարավորությունից, ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ, վերջինիս կամքին հակառակ, դիտավորությամբ ցանկացած բռնության գործադրումը, որը երեխային կամ անօգնական վիճակում գտնվող այլ անձին հոգեկան տառապանք կամ ցավ է պատճառել,

4) **սեռական բռնություն**՝ անձի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով վերջինիս հետ սեռական հարաբերություն ունենալը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելը կամ նրան սեռական հարաբերության հարկադրելը,

5) **երեխայի նկատմամբ սեռական բռնություն**՝ երեխայի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով վերջինիս հետ սեռական հարաբերություն ունենալը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելը կամ նրան սեռական հարաբերության հարկադրելը, կամ մինչև 16 տարեկան երեխայի հետ սեռական հարաբերություն ունենալը կամ մինչև 16 տարեկան երեխայի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելը,

6) **տնտեսական բռնություն**՝

ա. անձի հանդեպ անհարկի տնտեսական վերահսկողություն սահմանելու նպատակով վերջինիս կամքին հակառակ նրա գույքը դիտավորությամբ վերցնելը, ոչնչացնելը, վնասելը, յուրացնելը, վատնելը, օտարելը կամ թաքցնելը,

բ. կենսական անհրաժեշտության պայմաններից, այդ թվում՝ սննդից, դեղերից կամ դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ միջոցներից և/կամ բժշկական օգնությունից դիտավորությամբ զրկելը, ինչպես նաև անձի ազատ տեղաշարժվելու կամ այլ անձի հետ հաղորդակցվելու իրավունքը սահմանափակելը,

7) **զոհ**՝ անձ, ով տուժել է բռնարարի կողմից գործադրված ընտանեկան և սեռական բռնությունից կամ ում նկատմամբ առկա է դրա կատարման իրական վտանգը,

8) **ուղղորդում**՝ համագործակցության համակարգ, որի շրջանակներում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, հետ համատեղ՝ իրականացնում են ընտանեկան և սեռական բռնության կանխարգելմանը, զոհերի սոցիալական պաշտպանությանը, աջակցությանն ու վերականգնմանն ուղղված աշխատանքներ,

9) **համագործակցող հասարակական կազմակերպություն** (այսուհետ՝ **համագործակցող ՀԿ**)՝ ընտանեկան և սեռական բռնության դեմ պայքարի ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություն, որի համագործակցությունը համապատասխան պետական կառավարման մարմինների հետ ամրագրվում է վերջինիս ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքվող փոխըմբռնման հուշագրով:

II. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԶՈՇԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ

5. Ընտանեկան և սեռական բռնության գոհերին աջակցություն տրամադրելու, աջակցության տրամադրման գործընթացը համակարգելու և վերահսկելու համար պատասխանատու պետական կառավարման լիազորված մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ **Նախարարություն**):

6. Նախարարությունն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտնաբերում և նույնացնում է ընտանեկան և սեռական բռնության գոհերին՝ ձեռնարկելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված համապատասխան միջոցներ,

2) այն ընտանիքի անդամներին, որտեղ կատարվել է բռնություն կամ առաջացել է այդպիսի բռնության իրական վտանգ, իրազեկում է նրանց իրավունքների, պաշտպանության հասանելի միջոցների և ծառայությունների մասին,

3) անհրաժեշտության դեպքում ընտանեկան և սեռական բռնության գոհերին, նրանց երեխաներին և խնամքի տակ գտնվող անձանց, իրենց համաձայնությամբ, ուղղորդում է հոգեբանական, իրավաբանական, բժշկական, սոցիալական և այլ անհրաժեշտ օգնություն և պաշտպանություն տրամադրող համապատասխան կառույցներ,

4) ընտանեկան և սեռական բռնությունից պաշտպանություն և դրա կանխարգելում իրականացնելու նպատակով համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,

5) պարբերաբար անց է կացնում ընտանեկան և սեռական բռնությունից պաշտպանության և դրա կանխարգելման, ընտանեկան և սեռական բռնության գոհերի հետ ճիշտ շփման վերաբերյալ սոցիալական և այլ ծառայողների վերապատրաստման դասընթացներ,

6) ընտրում է համագործակցող հասարակական կազմակերպություններ՝ իր կողմից սահմանված՝ ընտրության չափանիշներին համապատասխան:

7. Ընտանեկան և սեռական բռնության գոհերի իրավունքների պաշտպանության, նրանց նկատմամբ գործադրվող բռնության կամ այդպիսի բռնության գործադրման

սպառնալիքի վերացման համար պատասխանատու պետական կառավարման լիազորված մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ Ոստիկանություն):

8. Ոստիկանությունն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կանխում, հայտնաբերում և բացահայտում է ընտանեկան և սեռական բռնության դեպքերը կամ դրանց կատարման իրական սպառնալիքը՝ ձեռնարկելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված համապատասխան միջոցներ,

2) այն ընտանիքի անդամներին, որտեղ կատարվել է բռնություն կամ առաջացել է այդպիսի բռնության իրական վտանգ, իրազեկում է նրանց իրավունքների, պաշտպանության հասանելի միջոցների և ծառայությունների մասին,

3) ընտանեկան և սեռական բռնության գոհերին, նրանց երեխաներին և խնամքի տակ գտնվող անձանց, իրենց համաձայնությամբ, ուղղորդում է Նախարարություն,

4) ընտանեկան և սեռական բռնությունից պաշտպանություն և դրա կանխարգելում իրականացնելու նպատակով համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,

5) պարբերաբար անց է կացնում ընտանեկան և սեռական բռնությունից պաշտպանության և դրա կանխարգելման, ընտանեկան և սեռական բռնության գոհերի հետ ճիշտ շփման վերաբերյալ ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացներ,

6) ընտանեկան և սեռական բռնության գոհերի իրավունքների պաշտպանության, այդպիսի բռնության վերացման և կանխման նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

9. Ընտանիքում սեռական բռնության ենթարկված երեխայի կամ անգործունակ ճանաչված անձի ոտնահարված իրավունքների վերականգնման և օրինական շահերի պաշտպանության համար պատասխանատու լիազորված մարմիններն են խնամակալության և հոգաբարձության մարմինները:

10. Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրականացնում են հետևյալ լիազորությունները՝

1) օրենսդրությամբ սահմանված կարգով ցուցաբերում են օգնություն (անհրաժեշտության դեպքում օգնությունը կարող է տրամադրվել գոհի բնակության վայրից դուրս՝ այլ հիմնարկում կամ կազմակերպությունում)՝

ա. ծնող(ներ) ունեցող և ընտանիքում ապրող՝ ընտանեկան բռնության գոհ դարձած երեխաներին,

բ. ծնողներ չունեցող և խնամակալների (հոգաբարձուների, որդեգրողների) կամ խնամատար ընտանիքում ապրող՝ ընտանեկան բռնության գոհ դարձած երեխաներին,

գ. դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված ընտանեկան և սեռական բռնության գոհ դարձած անձանց,

2) օրենքով սահմանված կարգով իրավասու մարմիններում, այդ թվում՝ դատարաններում իրականացնում են ընտանեկան և սեռական բռնության գոհ հանդիսացող երեխաների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,

3) ընտանեկան և սեռական բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ,

4) իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 922 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 164-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ ամրագրված այլ գործառույթներ:

11. Համագործակցող ՀԿ-ները տրամադրում են զոհերին անհետաձգելի շտապ բժշկական, իրավաբանական, սոցիալական, հոգեբանական օգնություն, մասնակցում են զոհերի ինտեգրմանն ուղղված աշխատանքների կազմակերպմանը: Համագործակցող ՀԿ-ները բռնության դեպքի մասին տեղեկությունը ստանում են Նախարարությունից՝ Ոստիկանությունից կամ այլ աղբյուրից զոհի մասին տեղեկությունները ստանալուց հետո 3 օրվա ընթացքում: Համագործակցող ՀԿ-ները կարող են հայտնաբերել բռնության դեպքի մասին տեղեկություններն ինքնուրույն՝ օրենքով թույլատրված ցանկացած եղանակով:

12. Սույն կարգի համաձայն լիազոր մարմին չհամարվող պետական կառավարման մարմինները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, հիմնարկները, կազմակերպություններն ու քաղաքացիական հասարակությունը կարող են աջակցել պետական կառավարման լիազորված մարմիններին, համագործակցող ՀԿ-ներին՝ ընտանեկան և սեռական բռնության դեպքերի բացահայտման, կանխման, կանխարգելման միջոցառումներն իրականացնելիս:

III. ԶՈՂԻ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ

13. Զոհի ուղղորդումն ու բռնության մասին տեղեկատվության փոխանցումն իրականացվում է կախված բռնության դեպքը բացահայտող կամ զոհին հայտնաբերող մարմնից:

14. Եթե բացահայտող մարմինը Նախարարությունն է, ապա աջակցության գործընթացը կազմակերպելուն զուգահեռ, Նախարարությունը բռնության դեպքի մասին տեղեկատվությունը փոխանցում է Ոստիկանություն:

15. Եթե բացահայտող մարմինը Ոստիկանությունն է, ապա զոհն ուղղորդվում է Նախարարություն՝ աջակցության գործընթացը կազմակերպելու համար:

16. Եթե բացահայտող մարմինը համագործակցող ՀԿ-ն է կամ այլ հիմնարկ կամ կազմակերպություն, ապա զոհի մասին տեղեկատվությունը փոխանցվում է

Նախարարություն: Համագործակցող ՀԿ-ից կամ այլ հիմնարկից կամ կազմակերպությունից բռնության դեպքի մասին ստացված տեղեկությունները Նախարարությունը փոխանցում է Ոստիկանություն:

17. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները բռնության դեպքի մասին տեղեկատվությունը փոխանցում են Ոստիկանություն, իսկ զոհին ուղղորդում են Նախարարություն:

18. Տեղեկատվության փոխանցման հիմնական սկզբունքն է գաղտնիության պահպանումը, իսկ ծառայությունների մատուցման հիմնական սկզբունքները՝ սոցիալական խնամառության բացառելը, համարժեքությունը և շարունակականության ապահովումը՝ վստահության մթնոլորտ ստեղծելու և խնդրի լուծման համար հնարավոր ուղիներ գտնելու միջոցով՝ ապահովելով մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

19. Չոհի ուղղորդումը կամ հանցագործության մասին տեղեկատվության փոխանցումը պետք է լինի բռնության դեպքի մասին տեղեկանալուց անմիջապես հետո բանավոր, իսկ դրանից հետո գրավոր՝ առավելագույնը 3 օրվա ընթացքում:

20. Չոհն ուղղորդվում է միայն իր գրավոր կամ բանավոր համաձայնությամբ: Երեխա զոհն ուղղորդվում է իր ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Եթե երեխայի նկատմամբ բռնությունը տեղի է ունեցել ընտանիքում, ապա համաձայնությունը տրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

21. Չոհին հայտնաբերած մարմինն օրենքով նախատեսված միջոցներ է ձեռնարկում զոհի ուղղորդման և լիազոր մարմինների համագործակցության արդյունքում զոհին անհրաժեշտ աջակցության տրամադրման, պաշտպանության և սոցիալական վերաինտեգրման ուղղությամբ:

IV. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԶՈՂԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

22. Ընտանեկան և սեռական բռնության զոհերի աջակցությունը ներառում է բժշկական, իրավաբանական, հոգեբանական, սոցիալական օգնությունն ու վերականգնումը:

23. Նախարարությունը համակարգում է սոցիալական ծառայություններ մատուցող հիմնարկների և կազմակերպությունների (ներառյալ կրթական և բուժհաստատությունների) գործողությունները, որոնք ուղղված են զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնմանն ու ինտեգրմանը:

24. Եթե ընտանեկան և սեռական բռնության ենթարկված անձը երեխա է, ապա նրան տրամադրվող աջակցությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է կազմակերպվել երեխայի խնամքն ու պաշտպանությունն իրականացնող համապատասխան հաստատությունում՝ օրենքով սահմանված կարգով:

25. Աջակցությունը հիմնված է զոհի կարիքների գնահատման վրա և իրականացվում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան:

26. Ձոհի կարիքները գնահատելիս հաշվի է առնվում բռնության տեսակը (ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխայի նկատմամբ սեռական բռնության առանձնահատկություններին), զոհի տարիքը, սեռը, առողջական վիճակը, ընտանեկան դրությունը և այլ հանգամանքներ:

27. Ձոհին կարող են տրամադրվել աջակցության հետևյալ ձևերը՝

- 1) խորհրդատվական օգնության տրամադրումը,
- 2) վերականգնողական օգնության, ներառյալ՝ բժշկական ու սոցիալ-հոգեբանական վերականգնման տրամադրումը,
- 3) բնափրային օգնության տրամադրումը,
- 4) կացարանի տրամադրումը մինչև 12 ամիս տևողությամբ,
- 5) խնամքի կազմակերպումը,
- 6) իրավաբանական օգնության տրամադրումը,
- 7) աշխատանք փնտրող անձանց զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկումը: